

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 5/3

2 մարտի 2017 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատիլ Երևանի պետական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2017/2018 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՏԱՀ



Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Երևանի պետական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2017/2018 ուսումնական տարվա ընդունելության

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», ԵՊՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ԵՊՀ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք: Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է հարցազրույցի հիման վրա:

3. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով կազմվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի նախագահությամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, ուսումնամեթոդական վարչության պետի, ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի վարիչի անդամակցությամբ: Ռեկտորի հրամանով ձևավորվում է մանդատային հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախագահությամբ, ուսումնամեթոդական վարչության պետի, համապատասխան ֆակուլտետների դեկանների և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի աշխատակիցների անդամակցությամբ: Քննությունների անցկացման համար պրոռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ներգրավվում են տվյալ ֆակուլտետի դեկանը, համապատասխան մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները և ընդունող հանձնաժողովի ներկայացուցիչը (ըստ անհրաժեշտության):

4. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 3 փուլով.

4.1. **Առաջին փուլում** բանակի տարկետման իրավունքով անվճար համակարգ կարող են դիմել ԵՊՀ բակալավրիատի տվյալ մասնագիտության ընթացիկ ուստարվա արական սեռի այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 13 կամ ավելի բարձր միավորներ, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 13: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

Հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

1. գերազանցության դիպլոմի առկայություն,

2. ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը:

4.2. **Երկրորդ փուլում** անվճար համակարգ առանց բանակի տարկետման իրավունքի կարող են դիմել ԵՊՀ բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման տվյալ մասնագիտության ընթացիկ ուստարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 13 կամ ավելի բարձր միավորներ, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 13: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

ԵՊՀ-ում միայն մագիստրատուրայում գործող մասնագիտություններով՝ 061104.00.7 - “Տեղեկատվական համակարգեր” (061104.02.7- “Տեղեկատվական համակարգերի մշակում”, 061104.04.7- “Տեղեկատվական համակարգերի կառավարում”), 011101.00.7 - “Կրթական գիտություններ” (011102.04.-”Կրթության կազմակերպում”), 022803.00.7-”Հայագիտություն” (022803.01.7- “Հայագիտություն”, 022803.02.7- “Սփյուռքագիտություն”), 031803.00.7 - “Եվրոպագիտություն” (031803.01.7- “Եվրոպագիտություն”), 031804.00.7 - “Հասարակայնության հետ կապեր” (031804.01.7 - “Հասարակայնության հետ կապեր”), ինչպես նաև ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի 031801.02.7 - “Ցեղասպանագիտություն” մագիստրոսական ծրագրի առաջին և երկրորդ փուլի դիմորդների ընդունելությունն անվճար համակարգ կատարվում է ընդունելության քննության արդյունքներով՝ մրցութային հիմունքներով:

Առաջին և երկրորդ փուլում 022101.00.7 - “Կրոնագիտություն” մասնագիտության անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել “Աստվածաբանություն” մասնագիտության բակալավրիատի շրջանավարտները ըստ իրենց ՄՈԳ-ի, 022202.00.7 - “Հնագիտություն” մասնագիտության անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել “Պատմություն” մասնագիտության շրջանավարտները ըստ իրենց ՄՈԳ-ի, 041201.00.7 - “Ֆինանսներ” և 041101.00.7 - “Հաշվապահական հաշվառում և հարկում” մասնագիտության անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել “Տնտեսագիտություն” մասնագիտության շրջանավարտները ըստ իրենց ՄՈԳ-ի, 023201.02.7 - “Միջմշակութային հաղորդակցություն /գերմաներեն լեզու, ֆրանսերեն լեզու, իսպաներեն լեզու, իտալերեն լեզու/” մասնագիտության անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել “Օտար լեզու և գրականություն” մասնագիտության շրջանավարտները ըստ իրենց ՄՈԳ-ի, 071403.03.7 - “Գերմեծ ինտեգրալ սխեմաներ” մագիստրոսական ծրագրի մագիստրատուրայի անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել “Ռադիոֆիզիկա” մասնագիտության գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում մասնագիտացման բակալավրիատի շրջանավարտները ըստ իրենց ՄՈԳ-ի:

“Մաթեմատիկա:Համակարգչային գիտություններ”, “Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա”, “Թարգմանչական գործ՝գերմաներեն և հայերեն”, “ Թարգմանչական գործ՝ֆրանսերեն և հայերեն”, “Թարգմանչական գործ՝իսպաներեն և հայերեն”, մասնագիտություններով բակալավրիատի շրջանավարտները անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել համապատասխանաբար “Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)”, “Ֆիզիկա”, “Լեզվաբանություն” (“Միջմշակութային հաղորդակցություն/ըստ լեզուների/”) մասնագիտություններով՝ ըստ իրենց ՄՈԳ-ի: “Թարգմանչական գործ՝ռուսերեն և հայերեն”, “Հունարեն լեզու և գրականություն” մասնագիտություններով բակալավրիատի շրջանավարտները

անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել “Լեզվաբանություն” մասնագիտության “Միջմշակութային հաղորդակցություն՝ ռուսաց լեզու” կրթական ծրագրով՝ ըստ իրենց ՄՈԳ-ի:

091601.00.7 - “Ֆարմացիա” մասնագիտությամբ մագիստրատուրայի անվճար համակարգ կարող են դիմել միայն ԵՊՀ դեղագիտություն մասնագիտության ընթացիկ տարվա շրջանավարտները:

Երկրորդ փուլում վճարովի համակարգ կարող են դիմել ԵՊՀ (նաև 4.1. կետի պահանջները չբավարարելու դեպքում) և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բուհերի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ և նախորդ տարիների շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա: 4.1 կետի պահանջները բավարարող դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:

042101.00.7 - “Իրավագիտություն” մասնագիտությամբ մագիստրատուրայի անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել միայն “Իրավագիտություն” մասնագիտության իրավագիտության բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները:

091601.00.7 - “Ֆարմացիա” մասնագիտությամբ մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել դեղագիտություն մասնագիտության և հարակից մասնագիտությունների շրջանավարտները: Հարակից մասնագիտությունների ցանկը հաստատում է ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը:

4.3. **Երրորդ փուլում** անվճար (բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգ կարող են դիմել ԵՊՀ տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորում ունեցող ՀՀ Ազգային բանակում ծառայած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց քննության մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

Անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած ՀՀ Ազգային բանակում ծառայած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության, բացառությամբ “Իրավագիտություն” մասնագիտության, որտեղ ընդունելությունը կատարվում է հարցազրույցի հիման վրա:

Մասնագիտության փոփոխման պարագայում ԵՊՀ շրջանավարտների կամ այլ ԲՈՒՀ-երի շրջանավարտների, ինչպես նաև ՀՀ Ազգային բանակում ծառայած և երեք տարի առաջ զորացրված դիմորդների ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում՝ տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

Երրորդ փուլով մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել նաև առաջին և երկրորդ փուլում ժամանակին չդիմած անձինք: Անվճար համակարգի ընդունելության

պահանջներին բավարարող դիմորդները վճարովի համակարգ են ընդունվում առանց ընդունելության քննության:

5. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ: Դիմում-հայտում դիմորդը կարող է նշել առավելագույնը 2 մագիստրոսական ծրագիր՝ ըստ նախապատվության: Հայտում նշված առաջին ծրագրի չբացվելու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին: Ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի համապատասխանում “ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերին”:
- բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճեններ,
- 4 լուսանկար (3x4 չափսի),
- զինվորական գրքույկի բնագիրն ու պատճեն (առկայության դեպքում),
- անձնագրի պատճեն
- ընդունելության ծառայությունների համար գանձվող 1000 դրամի վճարի անդորրագիր:

6. Ընդունելության փաստաթղթերն ընդունվում են՝ 1-ին փուլով՝ մայիսի 22-ից մինչև հունիսի 2-ը, 2-րդ փուլով՝ մայիսի 22-ից մինչև հուլիսի 3-ը, 3-րդ փուլով՝ հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 25-ը:

Ընդունելությունը կատարվում է՝ 1-ին փուլով՝ հունիսի 6-ից մինչև հունիսի 8-ը, 2-րդ փուլով՝ հուլիսի 6-ից մինչև հուլիսի 8-ը, 3-րդ փուլով՝ օգոստոսի 29-ից մինչև օգոստոսի 31-ը:

7. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը 15-օրյա ժամկետում (2-րդ փուլում մինչև հուլիսի 24-ը, 3-րդ փուլում մինչև սեպտեմբերի 15-ը) վճարելուց հետո՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական ծրագրերի: